րի առջև, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Մեծ Եղեռնի բյուրավոր զոհերի:

Արարողությունը, որը կազմակերպվել էր Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վրդ. Շահինյանի և Վատիկանի Եկեղեցիների Միության գրասենյակի համակարգող Հ. Ջոն Բոնիի ջանքերով, կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Գեղարդ աբդ. Վահունին և Տ. Մուշեղ աբդ. Բաբայանը:

Նախքան հոգեհանգստյան պաշտոնը Հոգեշնորհ Հայրերը, ուղեկցությամբ Հռոմի հայ հավատացյալների, ծաղկեպսակ զետեղեցին խաչքարի առջև, հավարտ որի Հայր Գեղարդը իր խոսքը ուղղեց կաթոլիկ հոգևորականին և հանուն հոգևոր հովվի ողջունեց նրա ներկայությունը, իր սրտի գոհունակությունը արտահայտեց, որ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին այսօր զորավիգ է մեր Եկեղեցուն և Հռոմի հայ համայնքին Մեծ Եղեռնի ոգեկոչման օրը: Հոգեշնորհ Հայր Սուրբն իր կոչն ուղղելով ներկա հավատացյալներին՝ հորդորեց միասնաբար՝ մեկ հոգի, մեկ բռունցք գործելու, կարողանալու համար հասնել Հայոց Ցեղասպանության միջազգայնորեն ճանաչմանը:

Ի ՅԱՐԳԱՆՍ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Երեքշաբթի, 24 Ապրիլին, առաւօտեան ժամը 10.30-ին, Հայոց Ցեղասպանութեան 92-ամեակին առիթով, առաջնորդութեամբ Իտալահայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առէն վրդ. Շահենեանի, Միլանի նշանաւոր Ս. Ամբրոսիոս հնամենի Մայր տաճարի մէջ մեծաշուք հանդիսաւորութեամբ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ՝ ի յիշատակ Ապրիլեան նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմին ծրագրեալ Մեծ Եղեռնի, այլ եւ Արցախեան գոյամարտին: Սուրբ եւ Անմահ Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հոգեշնորհ Տ. Գեղարդ աբդ. Վահունին:

Պատարագի սրբազան արարողութեան ներկայ էին Կարտինալ Տիոնիճի Թեթէմանսի ներկայացուցիչը, Միլանի քաղաքապետի ներկայացուցիչը, տեղի Քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչները, Միլանի Եկեղեցական Խորհրդի անդամները, Միլանի մէջ հաստատուած Էկումենիկ Կենտրոնի ներկայացուցիչները, Իտալիոյ Հայոց Հովուութեան ազգային-եկեղեցական հոգաբարձության անդամները, Իտալիոյ Հայոց Միութենական վարչութիւններու ներկայացուցիչները, տեղաբնակ բազում հայորդիներ, ինչպես նաեւ՝ իտալացիներ:

Իր պատգամին մէջ պատարագիչ Հայր Սուրբը կարեւորութեամբ ընդգծեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը, շեշտեց նաեւ, որ "Մեծ Եղեռնի նահատակներուն նուիրուած յարգանքի այս յուշատօնին, մենք ոչ միայն մեր խոր յարգանքն է, որ կը մատուցանենք մեր անշիրիմ մէկ ու կէս միլիոն նահատակներուն, այլեւ մենք իրենց նահատակութեան ճանապարհի ընդմէջէն պատգամ ունինք ըսելու համայն աշխարհին, որ Ապրիլ 24-ի նահատակաց մշտախօս պատուիրանը նոր սերունդին համար պէտք է ըլլայ չափանիշ զոհաբերութեան, հատկանիշ հայրենասիրութեան, տուրք յարգանաց հանդէպ մարդկային կեանքի բարոյական արժէքներուն եւ յանձնառութիւն Հայ ժողովուրդի իրաւանց հետապնդման մինչեւ ի կատարումն արդարութեան":

Հայր Սուրբի քարոզէն ետք խօսք առաւ Հոգեշնորհ Տ. Ֆրանքոյ Պոթթոնի Միլանոյի

Էկումենիք գրասենակի տնօրէնը որն իր խօսքը աւարտեց ըսելով. “Այսպիսով, 1915 թուականին կատարուած ողբերգութիւնը հայ ժողովուրդի դէմ կը համարենք որպէս քրիստոնէական ցեղասպանութիւն, վկայութիւն, որ քրիստոնէական հաւատքը ունի մարտիրոսութեան սուրբ կնիքը”:

Յաւարտ Սուրբ Պատարագի ներկայ բազմութիւնը, թափոր կազմած, մոմերով եւ ծաղիկներով ուղղուեցան դէպի նոյն եկեղեցւոյ հարեւանութեամբ զետեղուած՝ Հայոց Ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողխաչքարը, որտեղ Միլանի հայոց Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ (Նորահրաշ) երգչախումբը, գլխաւորութեամբ Տիար Ժան Անսրլեանի, հնչեցուց “Անոնց համար, որ ինկան” երգը (խօսք՝ Վահան Թեքէեանի):

Արարողութիւնը աւարտին հասաւ Տէրունական “Հայր Մեր” աղօթքով:

Յաւիտենական հանգիստ հոգւոցն նահատակաց մերոց որք կատարեցան յընթացս Համաշխարհային Առաջին պատերազմի եւ Արցախեան գոյամարտի վասն մէկ, անբաժան ու անբաժանելի, Միացեալ Հայաստանի:

ԴԻԻԱՆ ԻՏԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ